

h.98650
26-01-2021թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ Արմավիրի մարզպետարան
Դիմող՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵԶԴԻԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ
Հասցե՝ ԱՐՄԱՎԻՐ, ԱՐՏԱՇԱՐ, 1 Փ., 44,
masha.manoukyan@gmail.com : +37494086732

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Մենք ներկայացնում ենք «Մարդու իրավունքների եզրիական կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

Կից ուղարկում ենք ծրագրի նկարագրությունը և դիմում-խնդրանքը, որպեսզի մեզ աջակցեք համայնքների դպրոցներում ծրագրի մասին իրազեկման գործընթացում և ուրախ կլինենք ձեր ներկայացուցիչներին տեսնել մեր միջոցառումներին:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կից՝ 1 ֆայլ

Դիմող՝

ՍԱՇԻԿ ՍՈՒԼԹԱՆՅԱՆ

Merkeza Êzidya ya Mafê Mirov

“Yezidi center for
Human Rights” եզդիական
NGO



Մարդու իրավունքների
կենտրոն»
իրավապաշտպան ՀԿ

info@yezidirights.org | yezidirights.org | +374 94230093 | ,ք Երևան ,Աբեյյան 6/1

19.01.2021

ՀՀ Արմավիրի մարզպետետարանի կրթության,
մշակույթի և սպորտի վարչության պետ՝
Տիկին Սոնյա Բուդաղյանին

Հարգելի տիկին Բուդաղյան,

«Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» իրականացնում է տարբեր ծրագրեր, որոնց նպատակն է՝

- Պաշտպանել Հայաստանում և աշխարհում բնակվող եզդիների իրավունքները:
- Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջոցով Հայաստանում ապահովել իրավահավասարություն:
- Զարկ տալ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը:
- Նպաստել Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը և ազգային փոքրամասնությունների մասնակցությանը քաղաքական գործընթացներում:
- Պաշտպանել եզդիների, կրթական, մշակութային, լեզվական իրավունքները:
- Բացառել եզդիների նկատմամբ խտրականության դեպքերը:

Մեր կազմակերպությունը իրականացնում է «Հանրային ծառայությունների զգայունացում և եզդի երիտասարդների ներգրավում քաղաքականության դիսկուրսում» ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ դեսպանատան կողմից: Այս ծրագրի նպատակն է բարձրացնել տեղական իշխանությունների և ուսուցիչների մեթոդական կարողությունները եզդիների իրավունքներին աջակցելու գործում և եզդի երիտասարդներին հզորացնել և ներգրավել քաղաքական դիսկուրսում տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Ծրագիրը կբարելավի Արմավիրի մարզպետարանի աշխատակիցների կարողությունները և Զարթոնք, Երասխահուն, Նալբանդյան, Արտաշար, Եղեգնուտ գյուղերի դպրոցների ուսուցիչների և աշակերտների գիտելիքներն ու կարողությունները:

Ծրագիրը կկոտրի նաև կարծրատիպերը՝ բարձրացնելով հասարակության հետաքրքրությունը տարբեր սոցիալական խմբերի կարիքների վերաբերյալ և տարածելով ավելի մատչելի բովանդակություն՝ ավելացնելով եզրի երիտասարդների ներգրավվածությունը քաղաքականության մոնիտորինգի գործընթացում:

Ուստի մենք ակնկալում ենք ձեր աջակցությունը համայնքների դպրոցներում ծրագրի մասին իրազեկման գործընթացում և ուրախ կլինենք ձեր ներկայացուցիչներին տեսնել մեր միջոցառումներին:



Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքներով՝ Սաշիկ Սուլթանյան
«Մարդու իրավունքների եզրիական կենտրոն» իրավապաշտպան ՀԿ նախագահ

Պատասխանատու՝ վարչական ծրագրերի օգնական Մարիա Մանուկյան +37494086732